ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------- 2025թ. **N --- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՆՈՒՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ԵՐԵՔ ԽՆՁՈՐ» ՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» հ. 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 22-ի N 01/13/39886-2024 գրությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն քանդակագործ, Հայաստանի Հանրապետության նկարիչների միության անդամ Նունե Թումանյանի հեղինակած «Երեք խնձոր» քանդակը Երևան քաղաքի Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հարակից տարածքում տեղադրելու համար՝ համաձայն հավելվածի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2025 թվականի մարտի 18-ի
N --- Ա որոշման

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՆՈՒՆԵ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԵՂԻՆԱԿԱԾ «ԵՐԵՔ ԽՆՁՈՐ» ԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարանի կողմից 2023 թ. իրականացված «Երևանը կանանց համար» ծրագրի շրջանակում քանդակագործություն անվանակարգում հաղթող է ճանաչվել Նունե Թումանյանը՝ «Երեք խնձոր» քանդակով: Իրականացված նախագիծը նպատակ ուներ խրախուսելու կին արվեստագետների ստեղծարարական ծրագրերը՝ վերջիններին մշակութային կյանքում ինքնադրսևորման հնարավորություն տալով: Հատկանշական է, որ Երևան քաղաքում հատուկենտ քանդակներ են առկա, որոնք իրականացվել են կանանց կողմից: Հետևապես, «Երեք խնձոր» քանդակի տեղադրումը միտված է քաղաքի մշակութային կյանքի աշխուժացման գործում տաղանդավոր կին արվեստագետների դերի ընդլայնմանը և իրենց ստեղծագործությունների հանրահռչակմանը:

Նունե Թումանյանը ծնվել է 1963 թ. հոկտեմբերի 23-ին Երևանում: Ավարտել է Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարանը (1984 թ.), այնուհետև 1984-85 թթ. որպես ազատ ունկընդիր մասնակցել է Սանկտ Պետերբուրգի գեղարվեստի ակադեմիայի գծանկարի և քանդակագործության դասընթացներին: Երևանի գեղարվեստա-թատերական ինստիտուտի քանդակագործության բաժնում ուսանել է 1985-1991 թթ.: Գեղարվեստի պետական ակադեմիայում աշխատել է 1994-2009 թթ.: Հայաստանի նկարիչների միության անդամ է 1996 թվականից: Անհատական և խմբակային ցուցահանդեսների է մասնակցել ինչպես Հայաստանում այնպես էլ արտերկրյա շատ քաղաքներում:

Կարևորելով տաղանդավոր արվեստագետի արժանվույն գնահատման, ստեղծագործական ժառանգության արժևորման և հանրահռչակման անհրաժեշտությունը՝ առաջարկվում է ընդունել սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ